ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև Պալատ**) կայքում փաստաբանների միատեսակ լուսանկարներ տեղադրելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 15-րդ կետի, ինչպես նաև Պալատի 11.02.2012թ. կանոնադրության 17.3 կետի 27-րդ ենթակետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Պալատի կայքում փաստաբանների միատեսակ լուսանկարները տեղադրելու համար իրականացնել հետևյալ գործողությունները՝

- *փաստաբաններին լուսանկարել Պալատի շենքում՝ Պալատի խորհրդանշանը պարունակող պատերազմի և Հայաստանի Հանրապետության դրոշի մոտ.*
- *փաստաբանների համար սահմանել միատեսակ հագուստի ձև՝ ա) տղամարդկանց համար՝ մուգ երանգի բաճկոն, բաց երանգի վերնաշապիկ և փողկապ, իսկ բ) կանանց (աղջիկների) համար՝ բաց երանգի վերնաշապիկ (բաճկոն և/կամ վզկապ ըստ ցանկության):*

2. Սույն որոշման կատարման պատասխանատու նշանակել՝ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին:

3. Սույն որոշման կատարման ժամկետը սահմանել մինչև 2014թ. ապրիլի 1-ը:

(փոփոխվել է՝ ՀՀ ՓՊ նախագահի 01.04.2014թ. թիվ 139-Լ որոշմամբ)

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

16 հունվար 2014թ.
թիվ 15-Լ
ք.Երևան